

# Ի՞նչ է ՏԱԱՍ-ը

ՏԱԱՍ-ը հայագիտական առարկաներից ազգային ստուգատես է:

Ստուգատեսները իրենց առջև դրված խնդիրներով և նպատակներով տարբերվում են թեստավորման այլ միջոցառումներից: Այսպես՝ եթե ավարտական քննություններն ունեն հավաստագրման նպատակ, միասնական քննությունները՝ նաև մրցակցային քնություն, ապա ստուգատեսների հիմնական նպատակն է պարզել տվյալ ոլորտից գիտելիքների, հմտությունների և ունակությունների այն նվազագույն և հիմնական պաշարը, որը թույլ կտա մեր աշակերտներին հետագայում դառնալ լավ մասնագետներ իրենց ընտրած ոլորտներում և լինել պիտանի ու բանինաց իրենց ընտանիքների և մեր ազգի համար:

Ստուգատեսը տարբերվում է նաև քննվող նյութի առումով. եթե ավարտական, միասնական կամ ընթացիկ թեստերի նյութը գտնվում է հանրակրթական դպրոցի ծրագրերի և դասագրքերի շրջանակներում, ապա ստուգատեսի նյութ կարող են դառնալ ոչ միայն դպրոցում՝ հայագիտական առարկաների դասերից ստացած, այլև տաճը, առօրյա կյանքում, բակում, ընկերների և ծնողների հետ շփման արդյունքում, գրքերից, թերթերից, հեռուստահաղորդումներից, ինչպես նաև ինքնակրթությամբ ձեռք թերված գիտելիքները: Տարբեր են նաև ստուգման միջոցները, տարբեր է այդ նպատակի համար գրված թեստերի առաջադրանքների բնույթը: Դրանք կազմվում են այնպես, որ մի կողմից լինեն գրավիչ՝ և արտաքին տեսքի, և բովանդակության առումով, մյուս կողմից դրանց լուծումը պահանջի ոչ միայն հմտություն և իմացություն, այլև իմացածի կիրառում և արժեքում, երևակայություն և այդ կարգի այլ ունակություններ:

ՀՀ-ում շուրջ 15 տարի անցկացվում է TIMSS միջազգային ստուգատեսը, որի հիմնական նպատակը մասնակից երկրների կրթական համակարգերի համեմատությունն է տվյալ հանրակրթական առարկաներից (մաթեմատիկա և բնագիտական առարկաներ): Սակայն մինչ 2010թ. որևէ ազգային ստուգատես չի անցկացվել: Հայտնի չէ նաև հումանիտար առարկաներից ստուգատեսի փորձ: Այս առումներով ՏԱԱՍ 2010 - ը Գնահատման և թեստավորման կենտրոնի կազմակերպած առաջին ազգային հետազոտությունն է, որի նպատակն է եղել պարզել միջնակարգ դպրոցի աշակերտների հայագիտական առարկաներից գիտելիքների, հմտությունների և ունակությունների ընդհանուր մակարդակը և դրա վրա ազդող հիմնական գործոնների ազդեցության չափերը: Գործոնների հայտնաբերումը կատարվում է հարցաշարերի միջոցով, որոնցից ստացված տվյալները համադրվում են առաջադիմության ցուցանիշների հետ և պարզում այս կամ այն գործոնի նշանակալիությունը:

Հետազոտության հիմնական նպատակն է եղել պարզել, թե որքանով են մեր աշակերտները ծանոթ հայ գրականությանը, մեր ժողովրդի փառապանծ պատմությանը, ճանաչում մեր ազգի երախտավորներին և տիրապետում մայրենի լեզվին: